ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09» փետրվարի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 26 (քսանվեց) անդամներ՝
Ս.Բալասանյանը, Լ.Խաչատրյան, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Ա.Գրիգորյանը, Վ.Հունանյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Տ.Փանոսյանը, Վ.Եդիգարյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ա.Տոնոյանը, Ս.Աստոյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Սարգսյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Վարդանյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական տասներորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել ավագանու չորս անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):
2. Հաստատել հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝
   1) Հասմիկ Լևոնի Եղիազարյան - «Հայկական Վերածնունդ» խմբակցություն,
   2) Անդրանիկ Հրաչիկի Խաչատրյան- «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն,
   3) Կարեն Ժորայի Միքայելյան - «Բալասանյան» խմբակցություն,
   4) Արտյոմ Հակոբի Ղարաղազարյան– ավագանու անկախ անդամ:
3. Հանձնաժողովն իր լիազորությունները պահպանում է մինչև ավագանու հաջորդ հերթական նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 234-Ն որոշման(այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «4 607 674 900 (չորս միլիարդ վեց հարյուր յոթ միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «4 511 765 415 (չորս միլիարդ հինգ հարյուր տասնմեկ միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար չորս հարյուր տասնհինգ)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «5 175 675 700 (հինգ միլիարդ մեկ հարյուր յոթանասունհինգ միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «5 079 766 215 (հինգ միլիարդ յոթանասունինը միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր տասնհինգ)» թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4 հավելվածների:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 223–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 223-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «4 627 820 400 (չորս միլիարդ վեց հարյուր քսանյոթ միլիոն ութ հարյուր քսան հազար չորս հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «5 237 150 400 (հինգ միլիարդ երկու հարյուր երեսունյոթ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար չորս հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «4 627 820 400 (չորս միլիարդ վեց հարյուր քսանյոթ միլիոն ութ հարյուր քսան հազար չորս հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «5 992 092 300 (հինգ միլիարդ ինը հարյուր իննսուներկու միլիոն իննսուներկու հազար երեք հարյուր)» թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար NN 1,2,3,4 հավելվածների:

3. Հավելվածը լրացնել 5-րդ և 6-րդ հատվածներով՝ համաձայն 5 և 6 հավելվածների.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի (այսուհետ՝ բյուջե) տարեսկզբի ազատ մնացորդը՝ 754 941 922 (յոթ հարյուր հիսունչորս միլիոն ինը հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ է, որից՝ վարչական մասի մնացորդը՝ 487 506 576 (չորս հարյուր ութսունյոթ միլիոն հինգ հարյուր վեց հազար հինգ հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ֆոնդային մասի մնացորդը՝ 267 435 345 (երկու հարյուր վաթսունյոթ միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ,

2) բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդից 45 622 410 (քառասունհինգ միլիոն վեց հարյուր քսաներկու հազար չորս հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեով ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերին՝ առկա պարտավորությունների կատարմանը,

3) բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 709 319 500 (յոթ հարյուր ինը միլիոն երեք հարյուր տասնինը հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել բյուջեի ֆոնդային մաս:

4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 110 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍԸ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԹՎՈՎ 17(ՏԱՍՆՅՈԹ) ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

Համայնքի ավագանու անդամ Արման Գրիգորյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 5-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 110 (մեկ հարյուր տասը) անձանց՝ որպես դրամական օգնություն՝ կանխիկ հատկացնել 1 210 000 (մեկ միլիոն երկու հարյուր տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N223-Ն որոշման 3-րդ կետի 1-ի ենթակետի հիմքով

ընդունված Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 13-ի «2020 թվականի Արցախյան պատերազմի հետևանքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի՝ գերեվարված թվով 17(տասնյոթ) բնակիչների՝ զորահավաքային զորակոչով զորակոչված պահեստազորայինների ընտանիքներին, դրամական օգնություն հատկացնելու մասին» N 30-Ա որոշմամբ կատարված 850 000 (ութ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ծախսին:

3.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Արմենուհի Մխիթարյանի կողմից առաջարկվեց նախագծով նախատեսված 600 000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի փոխարեն Գրողների միության Շիրակի մարզային բաժամունքին հատկացնել 700 000 (յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Առաջարկն ընդունվեց:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին՝ որպես նվիրատվություն, հատկացնել 700 000 (յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2021 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու համար:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Արտաշես Առաքելյանի ընտանիքին՝ որպես դրամական օգնություն, հատկացնել 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 200-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի N 25-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 200-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին ենթակետով հաստատված NN 1-19 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-19 հավելվածների,

2) 2-րդ ենթակետով հաստատված NN 20-34 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 20-34 հավելվածների,

3) 3-րդ ենթակետով հաստատված NN 35-58 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 35-58 հավելվածների:

2. Սույն որոշմամբ հաստատված հավելվածներն ուժի մեջ համարել 2021 թվականի հունվարի 1-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9.«ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Մարզամշակութային ներառական կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ որպես նվիրատվություն, հատկացնել 90 000 (իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ «Եկ, մտածենք 9» ինտելեկտուալ խաղի կազմակերպման համար:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.
10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝Ս.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ ամսական 340000 (երեք հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 01-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.
11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 202-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝Ս.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ –0
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 169-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 202-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) որոշման 2-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածը՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների մասով, ուժի մեջ համարել 2021 թվականի հունվարի 01-ից:
   3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 01-ից:
   Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.
12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԵՎ ՇՉԵԴՐԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 26

դեմ – 0
ձեռնպահ – 0
Համայնքի ավագանու անդամ Արտյոմ Ղարաղազարյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 12 -րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Իսահակյան և Շչեդրին փողոցներին հարող հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.
13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 8-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 1(Ա.Գրիգորյան)

Լևոն Բարսեղյանը, Արմենուհի Վարդանյանը և Արամ Խաչատրյանը չմասնակցեցին օրակարգի 13-րդ հարցի քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.
3. Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2009 թվականի մարտի 31-ի «Գյումրի քաղաքի Շչորսի 2 և Աճեմյան 2 շենքերը սեփականության իրավունքով նվիրաբերելու մասին» N 8-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) որոշման մեջ «շենքերը» բառից հետո «վերականգնելու և մշակութային օջախների վերածելու» բառերը փոխարինել «վերանորոգելու, բարեկարգելու և վերականգնման աշխատանքներն իրականացնելուց հետո այն «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման տրամադրելու» բառերով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.
14. «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 26
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Կիրառել արտոնություններ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից «Մուշ-2» թաղամասում բնակելի համալիրի կառուցման 1-ին փուլի շինարարության թույլտվության 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրքի և 1 183 936(մեկ

միլիոն մեկ հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական վճարի նկատմամբ:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին ազատել սույն որոշման 1-ին կետում նշված տեղական տուրքի և վճարի վճարումներից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ N3/17 ՀԱՍՑԵԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Լևոն Բարսեղյանը և առաջարկեց համայնքապատքան գույքը շահույթ հետապնդող կազմակերպություններին անհատույց չտրամադրել:

Հարցի հեղինակի կողմից քվեարկությունից առաջ 15–րդ հարցը հանվեց քվեարկությունից և առաջարկվեց շահագրգիռ կողմերին նորից քննարկել նշված հարցի շուրջ:

ԼՍԵՑԻՆ.

16, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 26

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 08-ի ««ՖՐԱՆԿ ՄՅՈՒԼԼԵՐ» ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին» N 136-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

2) վերնագրում և որոշման 1-ին կետում «Ֆրանկ Մյուլլեր» բառերը փոխարինել ««ԷՅԷԼՋԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ ԿՈՆՑԵՊՏ» փակ բաժնետիրական» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ֆրանկ Մյուլլեր» ընկերությանը և «ԷՅԷԼՋԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ ԿՈՆՑԵՊՏ» փակ բաժնետիրական ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՎՈՆ ՌՈՒԴԻԿԻ ՀԱՐԵՑԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 26

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Լևոն Ռուդիկի Հարեյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2021 թվականի գույքահարկի գումարի նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 52.650 (հիսուներկու հազար վեց հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Ռուդիկի Հարեյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՔԱՂԱՔԱՑԻ ՓԱՅԼԱԿ ՎԱՉԱԳԱՆԻ ՍՈՂՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 26
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հետ վերադարձնել քաղաքացի Փայլակ Վաչագանի Սողոյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2021 թվականի գույքահարկի գերավճարի 172.425 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարը վերադարձնել քաղաքացի Մանվել Փայլակի Սողոյանի 2470052951980040 քարտային հաշվին՝ Գյումրի համայնքի տրանսպորտային միջոցի գույքահարկի 900215301582 հաշվարկային հաշվից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մանվել Փայլակի Սողոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. ՇԱԲՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 26
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, ամրացվող գույքի կազմը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածությանը համաձայնություն տալու մասին» N 56-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 4-րդ կետով հաստատված հավելված N 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածը՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների մասով ուժի մեջ համարել 2021 թվականի հունվարի 1-ից,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 1-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 202-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ –26

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը սահմանելու և Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի N 216-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման նախաբանում «25» թիվը փոխարինել «15» թվով,

2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի (այսուհետ հավելված) 4-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

4.	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար

3) հավելվածի 20-րդ կետը լրացնել հետևյալ նոր ենթակետերով և պարբերություններով՝

«

1)	մինչև 200(երկու հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ոչ հիմնական շինությունների տեղադրման, ինչպես նաև մինչև 100(մեկ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	տասը հազար
2)	սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.	
ա.	100-ից մինչև 500(մեկ հարյուրից մինչև հինգ հարյուր) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	քսան հազար
բ.	500-ից մինչև 1000(հինգ հարյուրից մինչև մեկ հազար) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	երեսուն-հինգ հազար
գ.	1000(մեկ հազար) և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	հիսուն հազար

»:

Որոշումն ընդունվեց

Լսեցին.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 26
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի մարտի 10-ը՝ ժամը՝ 12^{00}:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ս. Բալասանյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ.Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ռ.Սարգսյան _____

Ա. Մխիթարյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Հ.Պողոսյան _____

Ա. Առաքելյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

քաղաք Գյումրի

«09» փետրվարի 2021 թվական